

ԿԱՐՄԻՔ

Անուշ Անդրանիկի Խաչատրյանի՝ «Էլեկտրոնային մամուլի լեզուն (բառային կազմ, քերականական համակարգ)» ժ 02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Լեզուն շարունակ փոփոխվում է արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ: Այն պահից ի վեր, երբ ի հայտ եկավ համացանցը, հանդես եկան հաղորդակցման նոր մեթոդներ և ձևեր: Սոցիալական կայքերում, բլոգերում, առցանց խաղերում և առցանց հաղորդակցման ընթացքում աստիճանաբար ձևավորվեց, այսպես կոչված, *համացանցային լեզուն* կամ *խոսքը՝* այդպիսով դառնալով ուսումնասիրության լայն նյութ: Համացանցը և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը նպաստեցին ոչ միայն հաղորդակցման լեզվի կամ խոսքի փոխակերպմանը, այլև փոխեցին հաղորդակցման ավանդական միջոցները՝ լայն ասպարեզ բացելով էլեկտրոնային տեղեկատվության շրջանառության համար:

Անուշ Խաչատրյանի ատենախոսության թեման նվիրված է արդիական խնդիրներից մեկի ուսումնասիրությանը՝ էլեկտրոնային մամուլի լեզվի, մասնավորապես բառային կազմի և քերականական համակարգի քննությանը: Աշխատանքում հանգամանալից քննվում են տպագիր հայ մամուլի լեզվի մասին աշխատությունները և ուրվագծվում այն գործոնները և մարտահրավերները, որոնցով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել նորովի քննելու մամուլի լեզուն: Հատկապես համացանցի զարգացմանը զուգընթաց մեծ կիրառություն ստացավ նաև էլեկտրոնային մամուլը, որն ունի ոչ միայն ավանդական տպագիր մամուլին բնորոշ հատկանիշներ, այլև որոշակի առանձնահատկություններ, որոնք էլ ատենախոսության էջերում ներկայացնում է հեղինակը:

Աշխատանքում տեսական նյութի հանգամանալից քննությունը զուգորդվում է վերլուծական նյութով՝ հազեցած համապատասխան օրինակներով և ճեպապատկերներով: Ատենախոսն իր առջև խնդիր է դրել ներկայացնելու

էլեկտրոնային մամուլի լեզվի արդի վիճակը՝ բացահայտելով առավել բնութագրական առանձնահատկությունները, քերականական յուրահատկությունները, ինչպես նաև լեզվական իրականությունների պատճառահետևանքային կապերը: Ուշագրավ է, որ հեղինակը փորձ է անում ոչ միայն ներկայացնելու ժամանակակից հրապարակախոսության ամբողջական պատկերը, այլև ցույց տալու դրա ազդեցությունը ժամանակակից հայերենի զարգացման վրա: Քերես աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև հենց այդ հանգամանքով:

Ինչ վերաբերում է հետազոտության խնդիրներին, ապա դրանք բխում են առաջադրված նպատակից: Ատենախոսը տիրապետում է նյութին, կատարում ուշագրավ և ինքնուրույն վերլուծություններ՝ համոզիչ օրինակներով հիմնավորելով իր միտքը, և հանգում հետաքրքիր եզրահանգումների: Քաղված օրինակների վերլուծությունը վկայում է աշխատանքի ինքնուրույնության մասին:

Ատենախոսության կառուցվածքն ընտրված է տրամաբանական հետևողականությամբ և պատճառաբանված է: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթազույգումներով, եզրակացություններից, ունի օգտագործված գրականության ցանկ:

Ներածության մեջ ներկայացված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, հարցի ուսումնասիրվածության աստիճանը, ինչպես նաև էլեկտրոնային լրատվամիջոցների տարբերակիչ հատկանիշները՝ ավանդական լրատվամիջոցների համեմատությամբ:

Աշխատանքի առաջին գլխում ատենախոսն անդրադարձել է լրագրային ժանրերի դասակարգման տարբեր եղանակներին՝ առանձին ենթաբաժիններով ներկայացնելով տեղեկատվական, վերլուծական և գեղարվեստական հրապարակախոսական ժանրերը: Առավել ուշադրություն է դարձվել լրագրային ժանրերի զարգացման ժամանակակից միտումներին, մասնավորապես այն հանգամանքին, որ դրանք այժմ հանդես են գալիս հիբրիդային և համակցված ձևով:

Ատենախոսության հաջորդ գլուխներում հանգամանալից քննվում են էլեկտրոնային մամուլի լեզվի բառային և քերականական

առանձնահատկությունները: Բառապաշարը դասակարգելիս ատենախոսն առաջնորդվել է բառերի գործածության հաճախականությամբ՝ առանձնացնելով գործուն և ոչ գործուն բառաշերտերը: Նման մոտեցումը, կարծում ենք, տրամաբանական է և հնարավորություն է տալիս ընդգծելու համագործածական բառերի՝ ոչ հիմնական իմաստով և էլեկտրոնային մամուլի լեզվին բնորոշ գործածության դեպքերը: Շուրջ վաթսուն անուն էլեկտրոնային պարբերականներից քաղված օրինակները լիարժեքորեն լրացնում են հեղինակային դիտարկումները:

Էլեկտրոնային հաղորդակցումն ինքնին ենթադրում է արտահայտության միջոցների սեղմություն, խնայողություն, տեղեկատվություն փոխանցելու արագություն: Այս առումով հատկապես ուշադրության է արժանի էլեկտրոնային մամուլի լեզվում հանդիպող հապավումների քննությունը: Ատենախոսն անդրադառնում է ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներից փոխառված և պատճենված հապավական բարդություններին:

Ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների քննությամբ ամբողջանում է էլեկտրոնային մամուլի լեզվի ընդհանուր պատկերը, ընդգծվում են խոսքի մասերի կիրառության սահմանները, նախընտրելի, գործածական և մերժելի կառույցներն ու կաղապարները:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ այնուամենայնիվ պետք է նշել, որ աշխատանքում առկա են որոշ վրիպակներ և ոչ ճշգրիտ ձևակերպումներ: Բացի այդ՝ հետազայում աշխատանքն ավելի կատարյալ տեսնելու համար նշենք որոշ առաջարկություններ և դիտարկումներ:

1. Ատենախոսության էական բացթողումներից ենք համարում այն, որ ատենախոսը չի օգտվել ՀՀ ԳԱԱ Հ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Նոր բառեր» բառարանի պրակներից, որոնք լույս են տեսնում 2015 թվականից, և որոնց էջերում ներկայացվում են բացատրական և նորաբանությունների բառարաններում չգրանցված նոր բառերը, որոնց գերակշիռ մասը քաղված է էլեկտրոնային մամուլից:

2. Լրագրային ժանրերի լեզվական առանձնահատկությունները քննելիս ատենախոսը մի ուշագրավ դիտարկում է անում՝ «էլեկտրոնային մամուլում ուրույն

ժանր է ձևավորվել սոցցանցերի օգտատերերի գրառումներով» (էջ 24): Ցանկալի կլիներ այդ ժանրի մասին հանգամանալից քննություն տեսնել այս գլխում՝ որպես առանձին ժանր՝ համապատասխան օրինակներով:

3. Ատենախոսության տարբեր էջերում հանդիպում են նույն և նման հասկացությունները ներկայացնող տարբեր ձևակերպումներ, ինչպես, օրինակ, *էլեկտրոնային մամուլ, ցանցային մամուլ, ցանցային մեդիա, էլեկտրոնային լրատվամիջոց, ցանցային լրատվամիջոց, առցանց լրագրություն, առցանց լրատվամիջոց, էլեկտրոնային պարբերական, առցանց պարբերական, էլեկտրոնային լրագրանյութ* ևն: Նշված ձևակերպումները հաճախ կիրառվում են որպես զուգաձևություններ, բայց դրանք ոչ բոլոր դեպքերում են նույնական: Այսպես, *էլեկտրոնային մամուլը* վերաբերում է տեղեկատվության հաղորդման այն բոլոր միջոցներին, որոնք էլեկտրոնային սարքերի և հեռահաղորդակցության միջոցով են փոխանցվում, օրինակ՝ հեռուստատեսություն, ռադիո, ձայնագրող սարքեր ևն: Մինչդեռ *ցանցային մամուլը* վերաբերում է այն բովանդակությանը, որը տարածվում է համացանցի միջոցով, օրինակ՝ սոցիալական հարթակներ, կայքեր ևն: Աշխատանքը հետազայում մշակելիս առաջարկում ենք տերմինային միասնություն պահպանել:

4. Վերջին գլխի՝ «*Վերնագրերը էլեկտրոնային մամուլում*» ենթաբաժնի առաջին հատվածը (էջ 110-116), կարծում ենք, նպատակահարմար կլիներ քննել ատենախոսության առաջին գլխում, որտեղ ներկայացված են լրագրային ժանրերի լեզվական առանձնահատկությունները: Հատկապես այն դեպքում, երբ վերնագրերի հայտնի դասակարգումներ են ներկայացվում, կարծիքներ, օրինակներ, որոնք վերաբերում են վերնագրերի լեզվաոճական առանձնահատկություններին:

Հարկ ենք համարում նշել նաև, որ վերը նշված առաջարկություններն ու դիտարկումները աշխատանքն ավելի կատարյալ տեսնելու ցանկություններ են, հեշտությամբ շտկելի իրողություններ և չեն ազդում աշխատանքի ընդհանուր դրական որակի վրա:

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ լեզվական նյութի վերլուծությունը և դրանից բխող հետևությունները լուծում են ատենախոսի առաջադրած խնդիրները: Եզրակացությունները հիմնավորված են և բխում են նյութի քննությունից: Ատենախոսության թեմայով տպագրված թվով վեց հոդվածները տպագրվել են ՀՀ ԲԿԳԿ ընդունելի պարբերականներում, ատենախոսության հիմնական դրույթների ընդգրկման ամբողջականությունը պահպանված է, հոդվածներում արտացոլված նյութը վերաբերում է ատենախոսության երեք գլուխներին:


Այսպիսով Անուշ Անդրանիկի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսությունն իր թեմայով նորույթ է, իսկ գիտական տեսակետից՝ որակյալ: Այն արժանի է բարձր գնահատականի, ունի տեսական և գործնական որոշակի արժեք, իր հարցադրումներով, առաջադրված լուծումների հիմնավորվածությամբ, կիրառական նշանակությամբ համապատասխանում է Ժ 02.01 «Հայոց լեզու» մասնագիտությանը և «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ / 8-րդ կետի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, ուստի նրա հեղինակին կարելի է շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս
բան.գիտ.թեկնածու, դոցենտ



Մ. Ա. Սարգսյան

Ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտքարտուղար



Գ. Մ. Մխիթարյան

19.04.2024

